«ՀՐԱՎԻՐԻՐ ԸՆԿԵՐՈՋԴ» ԱԿՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. «ՀՐԱՎԻՐԻՐ ԸՆԿԵՐՈՋԴ» ակցիան /այսուհետ՝ Ակցիա/ գործում է 2015 թվականի հունիսի 16-ից մինչ 2015 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ: Ակցիային մասնակից յուրաքանչյուր բաժանորդի /այսուհետ՝ Հրավիրող/ տրամադրվում է 2 հատ մասնակցության կտրոն /այսուհետ՝ Կտրոն/: Կտրոնը վավեր է մինչև 2015 թվականի օգոստոսի 31-ը ներառյալ:
2. Որպես Հրավիրող՝ Ակցիային կարող են մասնակցել «Անլիմ», «Անլիմ ժամկետային», «Անլիմ ժամկետային+», «Ռինտերնետ», «Ռինտերնետ տարեկան», «Ռինտերնետ տարեկան+» սակագնային փաթեթների բաժանորդները: Ակցիային չեն մասնակցում, «Մարզային», «Անլիմ գործընկեր», «Ռինտերնետ գործընկեր» սակագնային փաթեթների բաժանորդները:
3. Հրավիրողը կարող է տրամադրել Կտրոնը ցանկացած ֆիզիկական անձի /այսուհետ՝ Հրավիրվող/, ով կարող է միանալ բացառապես Ռինտերնետ տարեկան սակագնային փաթեթին՝ համաձայն Ակցիայի պայմանների:
   Ակցիայի շրջանակներում Հրավիրվող չեն կարող հանդիսանալ Ռոստելեկոմի գործող այն բաժանորդները, ովքեր արդեն օգտվում են Ռոստելեկոմի Ինտերնետ ծառայությունից:
   Ակցիայի պայմանները չեն կիրառվում, եթե Հրավիրվողի կողմից նշված ծառայությունների մատուցման հասցեում Ռոստելեկոմի կողմից նախկինում մատուցվել են Անլիմ, Անլիմ ժամկետային, Անլիմ ժամկետային+, Ռինտերնետ, Ռինտերնետ տարեկան, Ռինտերնետ տարեկան+ սակագնային փաթեթներով ծառայություններ, որոնք կասեցվել են սկսած 16.06.2015թ.-ից:
4. Հրավիրվողը, ներկայացնելով Կտրոնը Ռոստելեկոմի Վաճառքի և սպասարկման սրահ, տեխնիկական հնարավորության առկայության դեպքում ստանում է Ակցիայով նախատեսված որևէ սակագնային փաթեթի բաժանորդագրման իրավունք՝ ստանալով իր ընտրած սակագնային փաթեթի պայմաններով տվյալ պահին սահմանված Ինտերնետի հիմնական արագության (սույն կետի իմաստով հիմնական արագություն չի հանդիսանում տվյալ պահին գործող որևէ հատուկ առաջարկի շրջանակներում տրամադրվող արագությունը) համեմատ եռապատիկ արագություն ծառայության ակտիվացման պահից սկսած 365 օրացուցային օրվա ընթացքում:
5. Հրավիրվողի կողմից ծառայությունների ակտիվացման պահից սկսած 365 օրացուցային օրվա ընթացքում Հրավիրողը նույնպես ստանում է տվյալ պահին իր սակագնային փաթեթի Ինտերնետի արագության (սույն կետի իմաստով հիմնական արագություն չի հանդիսանում տվյալ պահին գործող որևէ հատուկ առաջարկի շրջանակներում տրամադրվող արագությունը) համեմատ Ինտերնետի եռապատիկ արագություն:
6. Եթե Հրավիրվողի մոտ ծառայություններն ակտիվանում են ավելի ուշ քան 15.09.2015թ. ներառյալ, ապա թե՛ Հրավիրողը, թե՛ Հրավիրվողը չեն օգտվում Ակցիայի պայմաններից:

7. Եթե Օպերատորը հետագայում կատարում է այն սակագնային փաթեթի շրջանակներում տրամադրվող Ինտերնետ ծառայության արագության փոփոխություն, որի պայմաններով Հրավիրողը կամ Հրավիրվողը ստացել է Ինտերնետի եռապատիկ արագություն, ապա տվյալ պահից Հրավիրողը կամ Հրավիրվողը շարունակում է օգտվել Ինտերնետից Օպերատորի կողմից տվյալ պահին սակագնային փաթեթի շրջանակներում տրամադրվող Ինտերնետ ծառայության փոփոխված արագության և Ակցիայի շրջանակներում Հրավիրվողին կամ Հրավիրողին տրամադրված հավելյալ արագության գումարային արագությամբ:
8. Հրավիրողը կարող է հրավիրել առավելագույնը երկու Հրավիրվողի: 2-րդ Հրավիրվողի կողմից ծառայությունների ակտիվացման պահից սկսած՝ Հրավիրողի մոտ Ինտերնետ ծառայության եռապատիկ արագության գործողության ժամկետը երկարաձգվում է ևս 365 օրացուցային օրով: Եթե բաժանորդը միացել է Ռոստելեկոմի կողմից մատուցվող ծառայություններին Կտրոնով որպես Հրավիրվող, ապա նա նույնպես կարող է Ակցիայի շրջանակներում իր հերթին հրավիրել առավելագույնը մեկ անձի՝ ստանալով հնարավորություն օգտվելու Ակցիայի պայմաններից՝ որպես Հրավիրող (տվյալ պարագայում Բաժանորդի մոտ Ակցիայի շրջանակներում արդեն ստացած Ինտերնետ ծառայության եռապատիկ արագության գործողության ժամկետը երկարաձգվում է ևս 365 օրացուցային օրով): Այլ կերպ ասած՝ թե՛ Հրավիրողը, թե՛ Հրավիրվողը կարող են Ակցիայի շրջանակներում ստանալ եռապատիկ արագություն առավելագույնը 730 օրացուցային օրվա ընթացքում:
9. Եթե Հրավիրողը կամ Հրավիրվողը Ակցիայի շրջանակներում օգտվում է Ինտերնետի եռապատիկ արագությունից և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով ավելի ցածր ամսավճարով սակագնային փաթեթի/սակագնի, քան Ակցիայի շրջանակներում միացած սկզբնական սակագնային փաթեթի/սակագնի ամսավճարն է, ապա նոր սակագնային փաթեթի/սակագնի շրջանակներում դադարում է օգտվել Ակցիայի շրջանակներում ստացած եռապատիկ արագությունից:
10. Եթե Հրավիրողը կամ Հրավիրվողը Ակցիայի շրջանակներում օգտվում է Ինտերնետի եռապատիկ արագությունից և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով մեկ այլ սակագնային փաթեթի, որով նախատեսված չէ եռապատիկ արագության տրամադրում Ակցիայի շրջանակներում, ապա նոր սակագնային փաթեթի/սակագնի շրջանակներում դադարում է օգտվել Ակցիայի շրջանակներում ստացած եռապատիկ արագությունից:
11. Եթե Հրավիրողը կամ Հրավիրվողը Ակցիայի շրջանակներում օգտվում է Ինտերնետի եռապատիկ արագությունից և կատարում է սակագնային փաթեթի փոփոխություն՝ անցում կատարելով միևնույն կամ ավելի բարձր ամսավճարով սակագնային փաթեթի/սակագնի, քան Ակցիայի շրջանակներում միացած սկզբնական սակագնային փաթեթի/սակագնի ամսավճարն է, ապա նոր սակագնային փաթեթի/սակագնի շրջանակներում շարունակում է օգտվել Ինտերնետից նոր սակագնային փաթեթի համար Ակցիայի պայմաններով սահմանված արագությամբ:
12. Օպերատորի և Բաժանորդի միջև բոլոր այն հարաբերությունները, որոնք կարգավորված չեն սույն պայմաններով, կարգավորվում են Օպերատորի կողմից հրապարակված և Բաժանորդի

կողմից ժամկետային պայմանագիրը կնքելու պահին գործող խմբագրությամբ էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով, ինչպես նաև Օպերատորի կողմից հրապարակված ցանկացած այլ պայմաններով, որոնք չեն հակասում սույն պայմաններին:

13. Սույն պայմաններում բոլոր հասկացությունները կիրառվում են Օպերատորի կողմից էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններով սահմանված իմաստով: